**Արձանագրություն N 3**
**Протокол N 3**
**«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/191» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի**
**Заседание комиссии с кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/191**

Նիստի անցկացման՝
-վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 123 սենյակ,-օրը՝ 15.07.2024թ - ժամը՝ 15:00
Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Մ. Մանուկյան /ԳԱՊ/ |
| | Լ. Խաչատրյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Բադոյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ս. Խաչատրյան |

| | |
|---|---|
| Председатель комиссии: | М. Манукян, |
| Члены комисии: | Л. Хачатрян, А. Бадоян |
| Секретарь комисии: | С. Хачатрян |

**---------------------- Գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ------------------------------**
**Внеочередное заседание оценочной комиссии**

Հիմք ընդունելով ՊՎԾ-ի թիվ Ե/1613-24 գրությունը՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ընթացակարգի 8, 9 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Մ. Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ ընկերությունը՝ ի դեմս Լևոն Ստեփանի Կիրակոսյանը, հանդիսանում է նաև «Մաան» ՍՊ ընկերության տնօրեն, իսկ 2023 թվականի փետրվարի 10-ից մինչև 2025 թվականի փետրվարի 10-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Լևոն Ստեփանի Կիրակոսյանի և «Մաան» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Լևոն Ստեփանի Կիրակոսյանը 2022 թվականի հուլիսի 8-ից հանդիսանում է «Մաան» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն, համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի, հաշվի առնելով, որ «Մաան» ՍՊԸ-ի և «Մ. Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ- ի գործադիր տնօրենը հանդիսանում է միևնույն անձը:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: ...:»

Համաձայն Կարգի 121-րդ կետի՝ մասնակցի՝ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման, ուստի՝

Գնահատող հանձնաժողովը որոշեց «Ս. Ա. Կիրակոսյանսևր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել:

Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի հայտերի վերագնահատման արդյունքները:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/191» ծածկագրով ընթացակարգի 2, 3, 4 չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվում «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ն, 1, 5 չափաբաժինների մասով՝ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/191» ծածկագրով գնման ընթացակարգը 6, 7, 8, 9 չափաբաժինների մասով հայտարարվեց չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ ենթակետերի:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը՝ հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և և սահմանել 10 օրացուցային օր անգործության ժամկետ, այնուհետև ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագրերի նախագծերը:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ** | [signature] | Մ. Մանուկյան<br>М. Манукян |
| **Անդամներ** | [signature] | Լ. Խաչատրյան<br>Л. Хачатрян |
| | [signature] | Ա. Բադոյան<br>А. Бадоян |
| **Քարտուղար** | [signature] | Ս. Խաչատրյան<br>С. Хачатрян |